Արձանագրություն N 3

ՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/07 ծածկագրով գնանշման հարցման հայտերի գնահատման նիստի

ք.Քաջարան, Լեռնագործների 4 22 օգոստոսի 2019 թ.

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ Վահե Գրիգորյան

անդամներ՝ Գարեգին Գաբրիելյան, Նարե Համբարձումյան

քարտուղար՝ Կարինե Ղահրամանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Վահե Գրիգորյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2. Տեղեկատվություն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության գնահատման մասին

Վահե Գրիգորյան

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության գնահատման արդյունքում արձանագրվեց,որ «Դստո» ՍՊԸ և «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի միջև կնքված կոնսորցիումի պայմանագրի հիման վրա ֆինանսական մասով պատասխանատու Գործընկեր 2-ը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որի չափը գերազանցում է հրավերով սահմանված շեմը:

Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացնելով կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունը համարվել է շտկված

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3.Տեղեկատվություն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

Վահե Գրիգորյան

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

4.Գնահատման արդյունքների ամփոփում

Վահե Գրիգորյան

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվել է ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ Վահե Գրիգորյան _____

անդամներ՝ Գարեգին Գաբրիելյան _____

Նարե Համբարձումյան _____

քարտուղար՝ Կարինե Ղահրամանյան _____